



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

« 14 » 03 201 թ.

No 06/3-4/12253-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 15.02.2018թ.

թիվ Պ-10 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածի 3-րդ մասը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

Մինչև 01.01.2018թ. գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25.2-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգումների արդյունքներով ՀՀ կառավարության սահմանած կարգով պատրաստի արտադրանքի, ապրանքների մատակարարման կամ պահպանման վայրերում պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդ հայտնաբերվելու դեպքում ավելացված արժեքի հարկ վճարողից գանձվում էր տուգանք պակասորդի գնի (արժեքի) 50 տոկոսի չափով:

ՀՀ կառավարության 04.07.2013թ. N766-Ն որոշման 4-րդ կետով սահմանված էր, որ հարկային մարմնի պաշտոնատար անձը բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումը կամ ապրանքների մնացորդի պակասորդի հայտնաբերման համար «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի N4 հավելվածով սահմանված չափագրումը փաստացի սկսելու օրը հարկ վճարողից պահանջում էր ապրանքի մատակարարման և պահպանման բոլոր վայրերում ստուգում (չափագրում) իրականացնող պաշտոնատար անձանց մասնակցությամբ իրականացնել ապրանքների փաստացի մնացորդների գույքագրումներ՝ արձանագրելով գույքագրման փաստացի մնացորդները՝ ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի, նյութական պատասխանատուների՝ արտացոլված վաճառքի չափման միավորներով:

Նույն որոշման 5-րդ կետով սահմանված էր, որ մասնավորապես, ավելացված արժեքի հարկ վճարող համարվողները նույն որոշումն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ի, բայց ոչ շուտ, քան նույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող տասներորդ օրվա դրությամբ հաշվառում են ապրանքների մնացորդները՝ ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի: Նույն որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված էր, որ գույքագրման փաստաթղթային մնացորդը որոշելիս սկզբնական մնացորդի որոշման համար հիմք էր ընդունվում կարգի 5-րդ կետին համապատասխան հաշվառված մնացորդը, իսկ դրա բացակայության դեպքում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի N4 հավելվածով սահմանված չափագրմամբ հարկային մարմնի կողմից արձանագրված գույքագրման մնացորդները, եթե ապրանքների պակասորդի հայտնաբերմանն ուղղված կարգի 4-րդ կետով սահմանված ստուգումներ (չափագրումներ) չեն իրականացվել:

01.01.2018թ.-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԱԱՀ վճարողներն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ի դրությամբ հաշվառում են ապրանքների մնացորդներն՝ ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի: Այն հարկ վճարողները, որոնք Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահին չեն համարվում ԱԱՀ վճարող, սակայն հետագայում որևէ ամսաթվի դրությամբ կհամարվեն ԱԱՀ վճարող կամ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) ԱԱՀ վճարողները կամ այն հարկ

վճարողները, որոնց մոտ հարկային տարվա որևէ ամսում ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքը, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազան (առանց ակցիզային հարկի) կգերազանցի 100 միլիոն դրամի շեմը, նույն կետով սահմանված ապրանքային մնացորդների հաշվառումն իրականացնում են ԱԱՀ վճարող համարվելու կամ հարկային տարվա որևէ ամսում 100 միլիոն դրամի շեմը գերազանցելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 1-ի դրությամբ: Նույն կետում նշված հաշվառման արդյունքներն արտացոլվում են հարկային մարմնի սահմանած ձևում: Հարկ վճարողները հաշվառման արդյունքները կարող են արտացոլել այլ ձևաչափով, սակայն հարկային մարմնի սահմանած ձևով պահանջվող տվյալների և վավերապայմանների պարտադիր պահպանմամբ:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները, հայտնում ենք, որ գրությամբ նշված դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի, համապատասխան օրվա դրությամբ, ապրանքների մնացորդների հաշվառում չվարելու դեպքում հարկային մարմնի կողմից ստուգման ժամանակ հիմք է ընդունվում մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող վերը նշված իրավական ակտերով սահմանված կարգով հաշվառված ապրանքների մնացորդը:

Միաժամանակ, հայտնում ենք, որ ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը չպահպանելու՝ ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի ապրանքների մնացորդների հաշվառում չվարելու դեպքում օրենսդրությամբ պատասխանատվություն սահմանված չէ:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ